

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏԻԳՐԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԿՅՈՒԹՅԱՆ

ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք - սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան - 2015

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ГРИГОРЯН ТИГРАН АЛЕКСАНДРОВИЧ

ПРАВОВЫЕ ОСНОВАНИЯ И КРИТЕРИИ ЧЛЕНСТВА
В ЕВРОПЕЙСКОМ СОЮЗЕ

АВТОРЕФЕРАТ

Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02 “Публичное право – конституционное, административное, финансовое, муниципальное, экологическое, европейское право, государственное управление”

Ереван – 2015

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական
համալսարանում

- Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ **Ս. Գ. Ղազինյան**
- Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր **Գ. Բ. Դանիելյան**
- իրավաբանական գիտությունների
թեկնածու **Ս. Գ. Մարգարյան**

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիա

Ատենախոսության պաշտպանությունը տեղի է ունենալու 2015թ.-ի
մայիսի 12-ին, ժամը 14³⁰-ին Երևանի պետական համալսարանում գործող
ԲՈՀ-ի իրավաբանության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք.
Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական
համալսարանի գրադարանի զիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2015թ. ապրիլի 10-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,
իրավ. գիտ. թեկնածու

Ս. Ս. Մանասյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Научный руководитель: кандидат юридических наук,
доцент **А. Г. Казинян**

Официальные оппоненты: доктор юридических наук,
профессор **Г. Б. Даниелян**

кандидат юридических наук,
А. Г. Саргсян

Ведущая организация: Академия государственного управления РА

Հանձնարարագրի թեման հաստատվել է 2015 թ. մայիսի 12-ին, ժամը 14³⁰-ին Երևանի պետական համալսարանում գործող
ԲՈՀ-ի իրավաբանության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Սեղմագիրն առաքվել է 2015 թ. ապրիլի 10-ին:

Ավտորեֆերատը ընդունվել է 10-րդ ապրիլի 2015 թ.

Ученый секретарь специализированного совета,
кандидат юридических наук

А. А. Манасян

ԱՏԵՆԱՑՈՒՄԻ ԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: ԵՄ քաղաքականության առավել արդյունավետ և հաջողված դորտը՝ ԵՄ անդամակցությունը ողջ Եվրոպայում դարձել է ժողովրդավարության և իրավունքի գերակայության ամրապնդման, ինչպես նաև անվտանգության և կայունության ապահովման առանցքային գործիք: Ընդլայնման քաղաքականության տրանսֆորմատիվ ուժն արդեն իսկ ապացուցվել է Հարավարևելյան Եվրոպայի պետությունների պարագայում, որոնք անդամակցության շնորհիվ 1970-ականներին ազատվեցին բռնապետական համակարգից: Ուշագրավ է նաև Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի պետությունների, ինչպես նաև Խորվաթիայի օրինակը. վերջինս, դեռևս երկու տասնամյակ առաջ մեծապես տուժելով Բալկանյան հակամարտությունից, ներկայումս ԵՄ անդամակցության շնորհիվ ունի ժողովրդավարական կայուն համակարգ: Ընդլայնման քաղաքականության տրանսֆորմատիվ ուժի մասին խոսելիս այնուամենայնիվ պետք է նշել, որ այն չի վերաբերում միայն վերջնական նպատակին՝ ԵՄ անդամակցությանը: Անդամակցության գործընթացն ինքնին կարևոր է պետության փոխակերպման առումով: Այսպես օրինակ՝ ԵՄ ուղղակի միջնորդություններ է Բելգրադի և Պրիշտինայի միջև վերջերս կնքված հայտնի պայմանագիրը դրա վառ ապացույցն է:

2004 թ. և 2007 թ. ընդլայնման փուլերից հետո իրավական առումով որոշակի փոփոխություններ տեղի ունեցան անդամակցության գործընթացում, որոնք պայմանավորված էին միության՝ նախկինում քաղած դասերով: Նախաանդամակցային փուլում, ինչպես նաև անդամակցության գործընթացի ժամանակ ներկայումս առավել մեծ ուշադրություն է դարձվում անդամակցության քաղաքական չափանիշներին՝ իրավունքի գերակայությանը, անկախ դատական համակարգին, հանրային արդյունավետ կառավարմանը, կոռուպցիայի և կազմակերպված հանցավորության դեմ պայքարին:

Այսօր ԵՄ անդամակցության գործընթացը ներառում է մի շարք պաշտոնական քայլեր՝ սկսած նախաանդամակցային պայմանագրից մինչև անդամակցության պայմանագրի վավերացում: Այս գործընթացը հիմնականում ղեկավարում է Եվրոպական հանձնաժողովը, սակայն փաստացի բանակցությունները տեխնիկապես իրականացվում են միության անդամ պետությունների և թեկնածու պետությունների միջև:

Եվրոպական միության անդամակցության գործընթացի ուսումնասիրման կարևորությունը և բազմակողմանի ըմբռնումը շատ կարևոր են նաև Հայաստանի Հանրապետության համար, որը 1991 թ. անկախություն ձեռք բերելուց հետո իր գերակա ուղղություններից մեկը սահմանեց եվրոպական պետությունների, հատկապես դրանց մեծ մասն ընդգրկող Եվրոպական միության հետ սերտ համագործակցությունը: Դա մեծապես պայմանավորված է միջազգային թատերաբեմում Եվրոպական միության զբաղեցրած քաղաքական և տնտեսական դերակատարի ծանրակշիռ կարգավիճակով:

ԵՄ հետ Հայաստանի Հանրապետության հարաբերությունները, սկսած 1996 թ.-ից, աստիճանաբար ակտիվանում էին Գործընկերության և համագործակցության պայմանագրից շարժվելով դեպի փոխկապակցման պայմանագիր: Վերջինիս բանակցությունները սկսվեցին 2010 թ. հուլիսին և վերջնական փուլին հասան 2013 թ. հուլիսի 25-ին, երբ երկու կողմերն

ավարտեցին փոխկապակցման պայմանագրի ու խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի բոլոր փուլերը: Սակայն իրադարձություններն այլ ընթացք ստացան, երբ 2013 թ. ՀՀ-ն գանկություն հայտնեց միանալ Եվրասիական տնտեսական միությանը: Այդպիսով, մեր պետությունը չէր կարող 2013 թ. նոյեմբերին Վիլնյուսում կայանալիք գազաթանաժողովում ԵՄ հետ նախաստորագրել փոխկապակցման պայմանագիրը, քանի որ մեկ պետությունը չի կարող պատկանել երկու տարբեր մաքսային միությունների, եթե դրանց միջև արդեն իսկ առկա չէ առևտրային համաձայնագիր, կամ եթե դրանք չեն կիրառում միևնույն ստանդարտները: Այնուամենայնիվ, Վիլնյուսի գազաթանաժողովում ԵՄ-ն և ՀՀ-ն ընդունեցին հռչակագիր, որով ներկայացրին իրենց պատրաստակամությունը՝ շարունակելու և ընդլայնելու երկկողմանի համագործակցությունը ոչ առևտրային ոլորտներում, ինչպիսիք են՝ մարդու իրավունքները, արդյունավետ կառավարումը, իրավունքի գերակայությունը և այլն:

Այս ընթացքում եղան մի շարք շահարկումներ՝ սկսած Վիլնյուսում առանց խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի՝ փոխկապակցման պայմանագիրը ստորագրելու հնարավորությունից մինչև դասական մոտեցումը, թե սա ԵՄ-ՀՀ հարաբերությունների վերջն է: Ի վերջո, ինչպես վերը նշվեց, ԵՄ-ն և Հայաստանը սահմանում են համագործակցության որոշակի ոլորտներ, ինչպես նաև պարտավորվում են հարավորինս կարճ ժամանակահատվածում վերանայել երկկողմ հարաբերությունների իրավական հիմքը: Հենց այդ պատճառով էլ Եվրոպական միության անդամակցության գործընթացի իրավական ասպեկտի խորքային ուսումնասիրությունը առավել մեծ նշանակություն է ստանում:

Հնտագոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է վեր հանել և ուսումնասիրել Եվրոպական միության անդամակցության գործընթացի իրավական ձևաչափը, ինչը այդ քաղաքականությունը Հայաստանի Հանրապետության համար իրավական առումով կդարձնի առավել կանխատեսելի և ընկալելի: Այդ նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. ուսումնասիրել Եվրոպական միության անդամակցության գործընթացի իրավական հիմքերը և դրանց պատմական զարգացումը,
2. դիտարկել անդամակցության իրավական ընթացակարգը և այն իրականացնող սուբյեկտների իրավական կարգավիճակը,
3. ուսումնասիրել պայմանականության սկզբունքի դերը Եվրոպական միության ընդլայնման քաղաքականությունում և համեմատական վերլուծության շնորհիվ վեր հանել այդ սկզբունքում առկա նորամուծությունները,
4. սահմանել Եվրոպական միությանը երրորդ պետությունների անդամակցության համար սահմանված չափանիշները և վերջիններս գնահատելու հետ կապված հիմնախնդիրները,
5. քազմակրումանի վերլուծության միջոցով պարզել Հայաստանի Հանրապետության՝ Եվրոպական միության հետ համագործակցության հիմնախնդիրները, ինչպես նաև այդ համատեքստում Արևելյան գործընկերության դերը:

Ատենախոսության թեմայի վշակվածության աստիճանը և տեսական հիմքը: Ատենախոսության տեսական հիմքում ընկած են Եվրոպական միության

անդամակցության գործընթացի ոլորտին վերաբերող նշանավոր հեղինակների անդալեզու, ֆրանսալեզու, ռուսալեզու և հայալեզու աշխատություններում, մենագրություններում և գիտական հոդվածներում, ինչպես նաև Եվրոպական հանձնաժողովի պաշտոնյաների հետ հարցազրույցներում արծարծված խնդիրներից բխող հիմնադրույթները: Աշխատանքը գրելիս հեղինակը հատկապես հիմնվել է Եվրոպական միության ընդլայնման քաղաքականության ոլորտում մեծ համբավ ունեցող այնպիսի հեղինակների աշխատությունների վրա, ինչպիսիք են Դեվիդ Ֆինամորը, Քրիստոֆ Հիլլոնը, Ֆրենկ Հոֆմեստերը, Ալլան Թաթհամը, Դիմիտրի Կոչենովը, Յան Գրաբբեն, Պիետ Էկուտը և այլք:

Ատենախոսության նորմատիվ հիմքը: Հետազոտության ընթացքում հեղինակի կողմից օգտագործվել են ինչպես հետազոտական ընդհանուր գիտական՝ (համակարգակառուցվածքային, դիալեկտիկական, անալիզ և սինթեզ, տրամաբանական), այնպես էլ հատուկ իրավաբանական մեթոդները (ձևական-իրավաբանական և համեմատական-իրավաբանական):

Ելնելով հետազոտության թեմայի առանձնահատկություններից՝ աշխատանքի ընթացքում առավել լայնորեն կիրառվել է համեմատական-իրավաբանական մեթոդը՝ նպատակ ունենալով համեմատական վերլուծության ենթարկել Եվրոպական հանձնաժողովի կողմից թեկնածու պետությունների անդամակցության ճանապարհին իրականացվող բարեփոխումների գնահատումը:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսության գիտական նորույթը արտահայտվում է դիտարկվող հարցերի շրջանակում: Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ փորձ է կատարվում ատենախոսության մակարդակով քննության ենթարկել Եվրոպական միության անդամակցության իրավական հիմքերն ու չափանիշները: Մասնավորապես, այս համատեքստում քննարկման առարկա են դարձել այնպիսի հարցեր, ինչպիսիք են Եվրոպական միության անդամակցության իրավական հիմքերի պատմական զարգացումը, անդամակցության ընթացակարգերը, պայմանականության սկզբունքի զարգացումը ընդլայնման քաղաքականության շրջանակներում, անդամակցության չափանիշները և դրանց գնահատումը: Առանձնակի ուշադրություն է դարձվել Հայաստանի Հանրապետության՝ Եվրոպական միությանը անդամակցության համար Կոպենհագենյան, ինչպես նաև հիմնադիր պայմանագրերով սահմանված չափանիշներին համապատասխանության հիմնահարցերը:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները.

1. Եվրոպական միության անդամակցության չափանիշները սահմանվում են հիմնադիր պայմանագրերով, ինչպես նաև 1993 թ. հունիսին Կոպենհագենում Եվրոպական խորհրդի ներկայացրած պայմաններով, որոնք առավել հայտնի են որպես Կոպենհագենյան չափանիշներ: Հիմնադիր պայմանագրերով սահմանված չափանիշները և Կոպենհագենյան չափանիշները սերտորեն փոխկապված են: Կոպենհագենյան չափանիշների սահմանումը օբյեկտիվ անհրաժեշտություն էր՝ պայմանավորված այն հանգամանքով, որ հիմնադիր պայմանագրերում ԵՄ անդամակցության հիմնական պահանջների հստակ ձևակերպումների բացակայության պատճառով անդամ պետություններն ու ինստիտուտները անընդհատ լրացրել են անդամակցության չափանիշները զանազան նոր դրույթներով: Ասվածի համատեքստում ատենախոսը գտնում է, որ

Կոպենհագենյան չափանիշները պարունակում են ԵՄ շրջանակներում արդեն իսկ ձևավորված և պրակտիկայում սովորությանին կիրառություն ստացած անդամակցության պայմանները: Այսպիսով, Կոպենհագենյան չափանիշների համար հիմք են ծառայել 1961 թ. սկսված ԵՄ ընդլայնման գործընթացում առանձին պետությունների համար մշակված չափանիշների ու չափորոշիչների մեխանիզմների ընդհանրացումը, որը կիրառելի կլիներ բոլոր պետությունների համար:

2. 1993 թ. Կոպենհագենյան չափանիշները սահմանված են Եվրոպական խորհրդի կողմից, որը բարձրագույն քաղաքական որոշումներ իրականացնող մարմին է և ԵՄ որոշումներ իրականացնող օրենսդիր մարմինների ցանկում ներառված չէ: Ատենախոսը նաև գտնում է, որ հաշվի առնելով ԵՄ անդամակցության գործընթացի իրավական բնույթը, և որ այդ գործընթացը պետք էր դնել բավարար իրավական հիմքերի վրա՝ կարիք առաջացավ Կոպենհագենյան չափանիշները խտացված արտացոլել ԵՄ սահմանադրական խարտիայում՝ հիմադիր պայմանագրերում: Արդյունքում իր ամրագրումը ստացավ ներկայումս գործող Լիսաբոնի պայմանագրի 49-րդ հոդվածը:

3. Ատենախոսի կարծիքով՝ 2004-2007 թթ. ընդլայնման փուլից հետո առավել մեծ ուշադրություն է դարձվում իրավունքի գերակայության չափանիշին: Դրա մասին է վկայում այն, որ Խորվաթիայի հետ բանակցություններում ԵՄ ողջ իրավակարգավորումը կազմող *acquis communautaire*-ի՝ իրավունքի գերակայության վերաբերյալ գլուխը բաժանվեց երկու առանձին գլուխների՝ դատական և հիմնարար իրավունքների ու արդարության, ազատության և անվտանգության, որոնցում նախատեսվում էին մի շարք միջոցառումներ, ինչպիսիք են՝ անկախ դատական համակարգի ստեղծումը, կռուպցիայի դեմ արդյունավետ պայքարը, մարդու հիմնարար իրավունքների պաշտպանությունը և այլն: Ատենախոսը գտնում է, որ նման մոտեցումը պայմանավորված է Բուլղարիայի և Ռումինիայի անդամակցությունից հետո առաջացած դժվարություններով: Իրավունքի գերակայության չափանիշի ապահովման կարևորությունը վերահաստատվեց նաև Մոնտենեգրոյի հետ անդամակցության բանակցությունների ընթացքում, երբ Հանձնաժողովն առաջին անգամ նշեց, որ իրավունքի գերակայության վերաբերյալ առաջընթացը դանդաղելու դեպքում բանակցությունները կարող են կասեցվել:

4. Եվրոպական միությունը հիմնված է իրավունքի գերակայության սկզբունքի վրա, որի ապահովումը մնացած հիմնարար արժեքների հարգման կարևորագույն նրաշխիք է: Հանձնաժողովի կողմից իրավունքի գերակայությունը ընկալվում է լայն իմաստով և հիմնված է Արդարադատության եվրոպական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի կողմից ձևավորված սկզբունքների վրա, որը ենթադրում է այնպիսի համակարգի առկայություն, որտեղ օրենքները անվերապահորեն կիրառվում են բոլորի կողմից: Իր նախադեպային իրավունքում Արդարադատության եվրոպական դատարանը կարևորել է իրավունքի գերակայության սկզբունքի մի քանի բաղադրիչներ, որոնք են՝ օրինականության սկզբունքը, իրավական որոշակիության սկզբունքը, անկախ և արդյունավետ դատական վերանայման հնարավորությունը, օրենքի աջև բոլորի հավասարության սկզբունքը և այլն: Ատենախոսը գտնում է, որ իրավունքի գերակայության սահմանների վերաբերյալ

հստակ և սպառիչ պատասխան տվող համապարփակ փաստաթղթի բացակայության պայմաններում Եվրոպական հանձնաժողովը իրավունքի զերակայության ոլորտում երրորդ պետությունների դիտարկման ընթացքում հաճախ իրականացնում է ոչ հետևողական քաղաքականություն:

5. Ատենախոսը գտնում է, որ Եվրոպական միության անդամակցության ընթացակարգում կենտրոնական դերը պատկանում է անդամակցության բանակցությունների փուլին, որի կարևորագույն տարրը 1951 թ.-ից մինչ այդ օրը գործողության մեջ դրված և ԵՄ՝ կիրառման ենթակա նորմատիվ իրավական բազայի համապատասխանեցումն է սզգային օրենսդրությանը: Անդամակցության բանակցությունների փուլի տևողությունը յուրաքանչյուր պետության համար անհատական բնույթ ունի պայմանավորված նրանց կողմից իրականացվող բարեփոխումների արագությամբ և յուրաքանչյուր պետության օրենսդրության՝ ԵՄ չափանիշներին համապատասխանեցման արդյունավետությամբ: Իրավական առումով անդամակցության ընթացակարգերում հիմնական նորամուծությունները, ինչպիսիք են, օրինակ, Բանակցությունների շրջանակները, ի հայտ եկան 2004-2007 թթ. ընթացքում. դրանք կոչված էին հաղթահարելու քաղաքական, տնտեսական և ինստիտուցիոնալ առումներով զարգացման տարբեր մակարդակ ունեցող տասներկու պետությունների միաժամանակ անդամակցության հետ կապված խնդիրները:

6. Պայմանականության սկզբունքը Եվրոպական միության ընդլայնման գործընթացում ունի կենտրոնական դեր, որի էությունն այն է, որ անդամակցության գործընթացի յուրաքանչյուր հաջորդ փուլին անցնելու համար պետությունները պարտավորվում են բավարարել սահմանված որոշակի պահանջներ: Այս սկզբունքը 2004-2007 թթ. ընդլայնման փուլից հետո ենթարկվել է որոշակի փոփոխությունների, դարձել առավելապես տեխնիկական և սկսել է կիրառվել բանակցությունների առավել վաղ փուլերում: Այսպես օրինակ, դեռևս մինչբանակցային փուլում Բուլղարիային և Ռումինիային առաջադրվեցին լրացուցիչ պայմաններ, ինչը միանշանակ նորարարական քայլ էր: Պայմանականության սկզբունքի առավել տեխնիկական բնույթը հետագայում ցայտուն դրսևորվեց Արևմտյան Բալկանների պետությունների հետ բանակցություններում, որտեղ պայմանականության սկզբունքը չսահմանափակվեց միայն կոպենհագենյան չափանիշներով: Այստեղ կարևոր դեր խաղացին նաև կայունացման և ատցացման գործընթացի շրջանակներում ներկայացված պայմանները: Ատենախոսը գտնում է, որ Արևելյան գործընկերության շրջանակներում ևս պայմանականության սկզբունքն արդյունավետ կիրառելու և անդամակցության հեռանկար սահմանելու դեպքում այն կարող էր առավել հաջողված լինել:

7. Գնահատելով անդամակցության չափանիշների համապատասխանությունը՝ Եվրոպական հանձնաժողովը յուրաքանչյուր տարի թեկնածու պետությունների վերաբերյալ թողարկում է Անդամակցության ճանապարհին իրականացվող առաջընթացի վերաբերյալ զեկույցներ և ներկայացնում դրանք ԵՄ Խորհրդին: Անդամակցության չափանիշների անկողմնակալ գնահատումը պետք է թեկնածու պետությունների համար ապահովի հավասար վերաբերմունք և գրանցած առաջընթացի օբյեկտիվ գնահատում: Այնուամենայնիվ, անդամակցության չափանիշների գնահատման

օբյեկտիվությունը հաճախ ենթարկվում է տարբեր քննադատությունների: Մասնավորապես խոսքը վերաբերում է 2007 թ.-ին, երբ Ռուսիայի, ամբողջովին չհամապատասխանելով անդամակցության չափանիշներին, միացավ միությանը, իսկ Խորվաթիան, որն առավել մեծ առաջընթաց էր գրանցել կոպենհագենյան չափանիշների համապատասխանության ոլորտում, ոչ: Ատենախոսի կարծիքով՝ ճիշտ կլիներ, որ Եվրոպական հանձնաժողովը անհատական մոտեցում որդեգրելու փոխարեն ձեռնամուխ լինի մշակելու բոլոր պետությունների համար ընդունելի և միասնական մի մոդել, որը կկիրառվի թեկնածու պետությունների նախաանդամակցային գործընթացում:

8. Հայաստանի Հանրապետությունը Եվրոպական միության հետ համագործակցությունը մշտապես դիտել է որպես իր արտաքին քաղաքականության գերակա ուղղություններից մեկը: Մեր երկրի կողմից այդպիսի նկրտումները պայմանավորված են Եվրոպական միության անդամ պետությունների հետ ունեցած լայնածավալ տնտեսական, քաղաքական, մշակութային կապերով: Իրադարձությունները կտրուկ փոխվեցին 2013 թ. սեպտեմբերին, երբ Հայաստանի Հանրապետությունը ցանկություն հայտնեց միանալ Եվրասիական տնտեսական միությանը: Այդուհանդերձ Եվրոպական միության հետ արդյունավետ կապերի սերտացումը շարունակում է մնալ մեր պետության արտաքին քաղաքականության գերակա ուղղություններից մեկը: Ատենախոսը գտնում է, որ Հայաստանի Հանրապետությունը պետք է փոփոխություններ առաջարկի Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի անդամակցության պայմանագրի մեջ, որով իրեն Առևտրի համաշխարհային կազմակերպության շրջանակներում Եվրոպական միության հետ տնտեսական համագործակցությունը խորացնելու առավել լայն հնարավորություններ կտրամադրվեն: Դա պայմանավորված է հատկապես Եվրասիական տնտեսական միության հետ ընդհանուր սահմանի բացակայությամբ, ինչպես նաև հարևան Վրաստանի՝ Եվրասիանտեզրման գործընթացում ձեռք բերած հաջողություններով:

Վնտազտության տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության տեսական նշանակությունը պայմանավորված է նրանով, որ Եվրոպական միության անդամակցության իրավական ասպեկտները հետազոտելու արդյունքում կատարված ընդհանրացումները և եզրահանգումները զարգացնում են դրանց վերաբերյալ համադրությային մոտեցումները և վեր են հանում հիմնական խնդիրները:

Ատենախոսության հիմնական եզրահանգումները կարող են նպաստել ԵՄ-ՀՀ հարաբերությունների զարգացման և համագործակցության խորացման գործընթացին: Ատենախոսության մեջ տեղ գտած հիմնական դրույթները և եզրահանգումները կարող են կիրառվել գիտահետազոտական, մեթոդաբանական, իրավաստեղծ, իրավակիրառ և ուսումնական գործունեության մեջ:

Վնտազտության արդյունքների փորձարկումը:

Ատենախոսությունը նախապատրաստվել և իրականացվել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի Եվրոպական իրավունքի և միջազգային իրավունքի ամբիոնում, որի նիստերի ժամանակ տեղի են ունեցել աշխատանքի հիմնական դրույթների քննարկում ու կարծիքների փոխանակություն: Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հեղինակի չորս

գիտական հոդվածներում և գիտաժողովներին ներկայացված գեկույցներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխների ներքո գետնոված ինը պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված իրավական ակտերի ու գրականության ցանկից:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ներածություն մեջ հիմնավորվել են ատենախոսության թեմայի արդիականությունը և արդյունքների գիտական նորույթը, ներկայացվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, օբյեկտն ու առարկան, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, հետազոտության մեթոդաբանական և տեսական հիմքը, հետազոտության նորմատիվ հիմքը, գործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումը և ներդրումը, ինչպես նաև աշխատանքի կառուցվածքը:

Ատենախոսության **առաջին գլուխը**, որը վերտառված է «ԵՄ անդամակցության իրավական հիմքերը», բաղկացած է երեք պարագրաֆից:

Առաջին գլխի առաջին պարագրաֆում («ԵՄ անդամակցության իրավական հիմքերը և դրանց պատմական զարգացումը») ուսումնասիրվում են Եվրոպական միության անդամակցության իրավական հիմքերի զարգացման վեց փուլերը՝ սկսած Եվրոպական ածխի և պողպատի ընկերակցության պայմանագրի 98-րդ հոդվածից մինչև Լիսաբոնի պայմանագրի 49-րդ հոդվածը: Ներկայացվում են ԵՄ ընդլայնման իրավունքի համար կարևորագույն նշանակություն ունեցող պատմական զարգացումները՝ նախադրյալներ ստեղծելով միության ընդլայնման իրավական հիմքերի և ընթացակարգերի առավել խորը և համապարփակ վերլուծության ու ընկալման համար: Քննության է ենթարկվում նաև Եվրոպական քաղաքական համայնքի մասին նախագիծը, որը չնայած այդպես էլ իրականություն չդարձավ, սակայն նախատեսում էր ընդլայնման քաղաքականության վերաբերյալ որոշակի նորամուծություններ: 1957 թ. Հռոմի պայմանագրերով նոր կառույցների՝ Եվրոպական տնտեսական ընկերակցության և Եվրոպական ատոմային էներգիայի ընկերակցության ստեղծումից հետո անդամակցել ցանկացող նոր պետությունները պետք է միաժամանակ միանային գոյություն ունեցող երեք միավորներին: Ընդ որում, երեք կառույցներին անդամակցության գործընթացը իրականացվում էր երկու հարթությունների վրա՝ վերագրային և միջկառավարական: Եթե առաջինի դեպքում անդամակցության ընթացակարգը անդամ պետությունների համար որևէ դեր չէր նախատեսում, ապա միջկառավարական գործընթացում անդամ պետություններին վերապահվում էր որոշակի դերակատարում անդամակցության վերաբերյալ որոշումներ ընդունելու գործում: Տեղիները եզրակացնում է, որ նման պայմաններում անդամակցության գործընթացի իրավական կարգավորումը գործնականում ամբողջական և համակարգված չէր, քանի որ կիրառվող գործիքները տարբեր էին:

Առաջին գլխի երկրորդ պարագրաֆում, որը կրում է «ԵՄ անդամակցության ընթացակարգերը» վերնագիրը, վերլուծության է ենթարկվում ԵՄ անդամակցության ողջ գործընթացը՝ սկսված պետությունների կողմից անդամակցության դիմումը խորհուրդ ներկայացնելու պահից մինչև

անդամակցության համաձայնագրերի վավերացումը: Հնդինակը, գտնելով, որ ԵՄ մասին պայմանագրի 49-րդ հոդվածը նույնիսկ Լիսաբոնի պայմանագրի փոփոխություններից հետո շարունակում է մնալ միության անդամակցության գործընթացի ոչ կատարյալ ուղեցույց, ուսումնասիրության է ենթարկում 2004-2007 թթ. արևելյան ընդլայնման գործընթացում ի հայտ եկած իրավական նոր գործիքները: Ատենախոսը կարևորում է հատկապես Եվրոպական խորհրդի 2004 թ. որոշումը, որի համաձայն՝ յուրաքանչյուր թեկնածու պետության հետ անդամակցության բանակցություններն այսուհետև հիմնված են լինելու Բանակցությունների շրջանակի վրա, որը հաստատվելու է Խորհրդի կողմից՝ Հանձնաժողովի առաջարկությամբ: Այդպիսի նորամուծությունները կոչված էին հաղթահարելու քաղաքական, տնտեսական և ինստիտուցիոնալ առումներով զարգացման տարբեր մակարդակ ունեցող տասներկու պետությունների միաժամանակ անդամակցության հետ կապված խնդիրները: Հնդինակը հատուկ կարևորություն է տալիս Եվրոպական միության անդամակցության ընթացակարգում կենտրոնական դեր ունեցող անդամակցության վերաբերյալ բանակցությունների փուլին, որը վերաբերում է թեկնածու պետությունների կողմից ԵՄ ողջ իրավակարգավորումն ընդգրկող *acquis*-ին թեկնածու պետության օրենսդրությունը համապատասխանեցնելուն և կիրառելուն ուղղված միջոցառումներին:

Առաջին գլխի երրորդ պարագրաֆում («Պայմանականության սկզբունքը ԵՄ ընդլայնման քաղաքականությունում») ուսումնասիրվում է պայմանականության սկզբունքը որպես ԵՄ ընդլայնման քաղաքականության մեթոդաբանության հիմնական բաղադրիչ: Հնդինակի կարծիքով Բուլղարիայի և Ռումինիայի անդամակցությունից հետո որոշակի կասկածներ առաջ եկան այս սկզբունքի արդյունավետության վերաբերյալ: ԵՄ անդամ պետությունների ներկայացուցիչների շրջանակում գոյություն ունի տարածված տեսակետ, որ Բուլղարիան և Ռումինիան ժամանակից շուտ միացան միությանը, և պայմանականության սկզբունքը նրանց նկատմամբ բավականաչափ խստորեն չի կիրառվել: Հնդինակը գտնում է, որ հենց դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ Արևմտյան Բալկանների պետությունների նկատմամբ պայմանականության սկզբունքը որոշակիորեն տարբերվում է: Ըննարկման առարկա են դառնում պայմանականության սկզբունքի նոր բաղադրիչները, որոնք առկա են մինչբանակցային, բանակցությունների և անդամակցության փուլերում: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում Սերբիայի հետ բանակցություններին, որոնք պաշտոնապես սկսվել են 2014 թ. սկզբին: Այստեղ առանձնահատկությունը այն է, որ, բացի Հարավսլավիայի միջազգային քրեական տրիբունալի պայմանականությունից, որը կենտրոնական դեր էր խաղում Խորվաթիայի հետ հարաբերություններում, առկա է նաև Կոսովոյի խնդիրը, որը շատ է գրգռում սերբական կողմին և բանակցություններին հաղորդում է առավել քաղաքականացված բնույթ: Ընդհանուր առմամբ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ԵՄ կողմից կիրառվող պայմանականության սկզբունքը 2004 թ. և 2007 թ. ընդլայնումից հետո դարձել է ավելի տեխնիկական: Արդյունքում ԵՄ անդամակցության չափանիշները դառնում են ավելի հստակ, և հիմնական փոփոխությունը վերաբերում է պայմանականության խստացմանը անդամակցության բանակցությունների առավել վաղ փուլերում: Հնդինակը եզրակացնում է, որ ԵՄ-ն պետք է շարունակի

խիստ պայմանակաճության գիծը, որը պահանջում է իրական բարեփոխումների իրականացում մինչև բանակցությունների հաջող փուլին անցնելը՝ մշտապես շեշտը դնելով acquis-ի ընդունման և իրականացման վրա: Միայն այս դեպքում պայմանակաճության սկզբունքը արդյունավետ գործիք կժառայի թե՛ միության և թե՛ թեկնածու պետությունների իշխանությունների համար:

Առենյալստության **երկրորդ գլուխը՝ «ԵՄ անդամակցության չափանիշները»** վերտառությամբ, բաղկացած է երեք պարագրաֆներից:

Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում («Հիմնադիր պայմանագրերով սահմանված անդամակցության չափանիշները») հանգամանորեն վերլուծության են ենթարկվում այն արժեքները, որոնք պետք է հարգվեն և խթանվեն միությանը անդամակցել ցանկացող պետությունների կողմից: Առանձնակի ուշադրություն է դարձվում ԵՄ անդամակցության աշխարհագրական չափանիշին, որի համաձայն՝ Եվրոպական միությանը անդամակցել կարող են բացառապես եվրոպական պետությունները: Այդուհանդերձ ընդլայնման վերջին տարիների պրակտիկան ցույց է տալիս, որ ներկայումս առավել կարևորվում են ԵՄ անդամակցության՝ ժողովրդավարության և իրավունքի գերակայության չափանիշները, որոնք ամրագրված են թե՛ Լիսաբոնի պայմանագրում և թե՛ Կոպենհագենյան չափանիշներում: Իրավունքի գերակայության սկզբունքի՝ որպես անդամակցության չափանիշի կարևորությունը վերահաստատվեց, երբ Մոնտենեգրոյի հետ անդամակցության բանակցությունների ընթացքում Հանձնաժողովը նշեց, որ իրավունքի գերակայության գլուխների վերաբերյալ առաջընթացը դանդաղելու դեպքում ողջ բանակցությունները կարող են կասեցվել: Ավելին, Մոնտենեգրոյի, ինչպես նաև Սերբիայի հետ անդամակցության բանակցությունները սկսվեցին հենց իրավունքի գերակայության վերաբերյալ գլուխներից:

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում «ԵՄ անդամակցության Կոպենհագենյան չափանիշները» վերտառությամբ, վերլուծության են ենթարկվում 1993 թ. հունիսին Եվրոպական խորհրդի՝ Կոպենհագենում տեղի ունեցած հանդիպմանը ներկայացված ԵՄ անդամակցության չափանիշները, որոնք առավել հայտնի են «Կոպենհագենյան չափանիշներ» անվանումով: Առանձին-առանձին քննարկվում են Կոպենհագենյան չափանիշների քաղաքական, տնտեսական, ինչպես նաև իրավական բաղադրիչները: Հնդիսակը եզրակացնում է, որ Կոպենհագենյան չափանիշները մեծ իաշվով արտացոլում են միության անդամակցության՝ ինստիտուտների և անդամ պետությունների կողմից նախկինում ձևավորված պայմանները: Արդյունքում Կոպենհագենյան չափանիշները պարզապես հաստատում են երկար ժամանակ գոյություն ունեցող պրակտիկան:

Երկրորդ գլխի երրորդ պարագրաֆում («ԵՄ անդամակցության չափանիշների գնահատումը») քննարկման առարկա է դառնում ԵՄ անդամակցության չափանիշների գնահատմանն ուղղված՝ Հանձնաժողովի կողմից յուրաքանչյուր տարի թեկնածու պետությունների վերաբերյալ հրապարակվող Անդամակցության ճանապարհին իրականացվող առաջընթացի մասին զեկույցները, որոնք ներկայացվում են Խորհրդին: Եվրոպական հանձնաժողովի նպատակն էր նախասանդակցային շրջանում թեկնածու պետությունների համար ապահովել թափանցիկ և մրցակցային միջավայր: Հնդիսակը հետաքրքրական է համարում այն փաստը, որ ԵՄ-ն՝ ԵԱՀԿ-ի,

Համաշխարհային բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի, Freedom House-ի և այլ հեղինակավոր կազմակերպությունների կողմից հրատարակվող զեկույցներն ամփոփելու փոխարեն ստեղծեց գնահատման սեփական համակարգը: Վերլուծական գնահատման են ենթարկվում հիմնականում Թուրքիայի, Լեհաստանի և Ռուսիայի՝ ԵՄ անդամակցության ճանապարհին գրանցած առաջընթացի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից պարբերաբար թողարկվող զեկույցները: Ըննությունը ցույց է տալիս, որ Ռուսիան, ամբողջովին չհամապատասխանելով անդամակցության չափանիշներին, միացավ միությանը 2007 թ.-ին, իսկ Լոթվաթիան, որն առավել մեծ առաջընթաց էր գրանցել կրպենհագենյան չափանիշների համապատասխանության ոլորտում, ոչ: Հնդկակը եզրահանգում է, որ պարբերական գնահատականներն ու առաջընթացի զեկույցները ոչ միայն կիրառվում էին՝ ընտրելու թեկնածու պետություններին և գնահատելու անդամակցության ճանապարհին վերջիններիս գրանցած առաջընթացը, այլ նաև հիմնավորելու այն քաղաքական իրողությունը, որը նպաստեց Բուլղարիայի ու Ռուսիայի անդամակցությանը և Լոթվաթիայի անդամակցության մեծմասնը՝ չնայած կրպենհագենյան չափանիշների ոլորտում գրանցած փաստացի առաջընթացին: ԵՄ գնահատման անկողմնակալությունն ու թափանցիկությունը ներկայումս ևս շարունակում են արդիական խնդիր մնալ:

Ատենախոսության **երրորդ գլուխը՝** «Հայաստանի Հանրապետության համապատասխանությունը ԵՄ անդամակցության չափանիշներին» վերտառությամբ, բաղկացած է երեք պարագրաֆներից:

Երրորդ գլխի առաջին պարագրաֆում («Հայաստանի Հանրապետության համապատասխանությունը ԵՄ անդամակցության հիմնադիր պայմանագրերով սահմանված չափանիշներին») վերլուծության առարկա են դառնում ՀՀ-ԵՄ համագործակցության ոլորտում առկա հիմնախնդիրները և այդ համատեքստում ՀՀ համապատասխանությունը ԵՄ անդամակցության՝ հիմնադիր պայմանագրերով սահմանված չափանիշներին: Հնդկակը սկզբում անդրադառնում է Հայաստանի՝ եվրոպական պետություն լինելու հիմնահարցին: Այնուհետև վերլուծության են ենթարկվում Եվրոպական միության մասին պայմանագրի 2-րդ հոդվածում նշված արժեքները հարգելու հետ կապված հիմնահարցերը: Ատենախոսը եզրակացնում է, որ 1991 թ. անկախության ձեռքբերումից հետո մեր հանրապետությունը նշանակալի քայլեր է ձեռնարկել մարդու իրավունքների միջազգային չափանիշները և նորմերը ազգային օրենսդրությունում ամրագրելու համար: Դրա արդյունքում հռչակվել են Սահմանադրությամբ ամրագրված անձնական ազատության, արժանապատվության և հավասարության իրավունքները, ինչպես նաև երաշխավորվել են քաղաքացիների, օտարերկրացիների, քաղաքացիություն չունեցող անձանց՝ Սահմանադրությամբ, իրավական այլ ակտերում, այդ թվում՝ մարդու իրավունքներին վերաբերող միջազգային փաստաթղթերում ամրագրված իրավունքներն ու ազատությունները: Այդուհանդերձ, այդ բարձրագույն արժեքները դե ֆակտո լիարժեք չեն հարգվում, և այդ ուղղությամբ մեր երկիրը դեռևս որոշակի անելիքներ ունի:

Երրորդ գլխի երկրորդ պարագրաֆում, որը ունի «Հայաստանի Հանրապետության համապատասխանությունը ԵՄ անդամակցության կրպենհագենյան չափանիշներին» վերնագիրը, կրպենհագենյան չափանիշներին Հայաստանի համապատասխանության վերաբերյալ համապարփակ կարծիք

կազմելու համար ուսումնասիրության են ենթարկվում ԵՄ ինստիտուտների, անկախ գնահատում իրականացնող միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև ՀՀ պետական կառույցների հրապարակած արդյունքները: Հնդիսակն այս պարագրաֆում անդրադառնում է 2006 թ. նոյեմբերի 14-ին ԵՄ-ՀՀ համագործակցության խորհրդի կողմից ընդունված ԵՀԲ Գործողությունների ծրագրին: Հատկանշական է, որ Գործողությունների ծրագրի առաջնային ոլորտներից երկուսն ուղղված են կուպենհագենյան քաղաքական չափանիշներին, ինչպիսիք են՝ ժողովրդավարությունը, իրավունքի գերակայությունը, մարդու իրավունքների, ներառյալ փոքրամասնությունների հարգումը: Հնդիսակը եզրակացնում է, որ այս բնագավառում, ինչպես նաև հիմնադիր պայմանագրերով սահմանված անդամակցության չափանիշներին համապատասխանության ոլորտում, մեր երկիրը, չնայած վերջին տարիներին գրանցած զգալի առաջընթացին, այդուհանդերձ դեռևս շատ անելիքներ ունի: ԵՄ-ն ևս պետք է առավել հստակեցնի անդամակցության չափանիշները և իր սահմանները: Եվրոպական միության հետ արդյունավետ կապերի սերտացումը շարունակում է մնալ մեր պետության արտաքին քաղաքականության գերակա ուղղություններից մեկը: Նշված գործընթացին չպետք է խոչընդոտի նաև Հայաստանի Հանրապետության անդամակցությունը Եվրասիական տնտեսական միությանը:

Երրորդ գլխի երրորդ պարագրաֆում «Արևելյան Գործընկերությունը որպես ԵՄ անդամակցության չափանիշներին մոտեցնելու գործիք» վերտառությամբ, վերլուծության են ենթարկվում Արևելյան գործընկերության ծրագրի շրջանակներում իրականացվող բարեփոխումները: Ծրագրի նախաձեռնությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ այլևս բարդացել էր ԵՀԲ հարավային և արևելյան հարևանների հետ հարաբերությունները գարգացնել մեկ միասնական հարթակի վրա: Հնդիսակը գտնում է, որ Հայաստանը իսկապես շահագրգռված էր ԵՄ հետ համագործակցությամբ: Քանի որ Հայաստանը դեռի ծով ելք չունեցող երկիր է, և որ երկու հարևանների՝ Թուրքիայի և Ադրբեյջանի հետ սահմանները փակ են, այդ համագործակցությունը բխում է մեր երկրի աշխարհաքաղաքական ու տնտեսական շահերից: Հնդիսակը եզրակացնում է, որ ԵՄ նախաձեռնած Արևելյան գործընկերության ծրագիրը թեև գործընկեր պետությունների՝ միությանը անդամակցելու հեռանկար չի նախատեսում, այդուհանդերձ դրա շրջանակներում իրականացվող ծրագրերի մեծ մասն ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերաբերում են ԵՄ անդամակցության չափանիշներին, և հետևաբար այն վստահ կարելի է դիտել որպես ԵՄ անդամակցության չափանիշներին մերձեցման գործիք: Հնդիսակը արձանագրում է նաև, որ Արևելյան գործընկերության շրջանակներում ևս պայմանականության սկզբունքը արդյունավետ կիրառելու և անդամակցության հեռանկար սահմանելու դեպքում այն կարող էր առավել հաջողված լինել:

Եզրակացությունում ամփոփված են ատենախոսության առարկայի ուսումնասիրության արդյունքում հնդիսակի կատարած հիմնական եզրահանգումներն ու առաջարկությունները:

1. ԵՄ ընդլայնման մոտ կենդարյա պատմության ընթացքում այն ներկայացել է որպես առավել հաջողված և կենսունակ քաղաքականության ոլորտներից մեկը: Չնայած այն փաստին, որ շատերի կարծիքով ներկայումս ԵՄ անդամակցության գործընթացը ճգնաժամ է ապրում, այդուհանդերձ 2013 թ.

հուլիսի մեկին Խորվաթիայի անդամակցությունը ցույց տվեց, որ ԵՄ արտաքին քաղաքականության այս գործիքը դեռևս կենսունակ է: ԵՄ անդամակցության իրավական հիմքերը որոշակի պատմական զարգացում են ունեցել՝ համապատասխանելու ժամանակի պահանջներին, ինչպես նաև միության ինստիտուցիոնալ ֆունկցիոնալությանը: Ընդլայնման իրավական հիմքերի զարգացումը հիմնականում համընկել է ընդլայնման փուլերի զարգացմանը, որոնք, սակայն, միանգամայն տարբեր գործընթացներ են: Սկզբնական շրջանում անդամակցության իրավական կարգավորումը բարդ գործընթաց է եղել: Իրավական տեսանկյունից մինչ Մասստրիխտի պայմանագրի ուժի մեջ մտնելը ընդլայնման յուրաքանչյուր փուլ կարգավորվել է միանգամայն տարբեր հարթությունների վրա հիմնված երկու տեսակի գործիքների միջոցով, որը միաժամանակ հանգեցրել է անդամակցության երեք կառույցների: Պետք է նշել, որ իրավական առումով ԵՄ ընդլայնման ոչ մի փուլ նույնական չի եղել նախորդողներին, և յուրաքանչյուր փուլում կիրառվել են նոր կանոններ ու սկզբունքներ, որոնք հիմնականում նախկին գործիքների զարգացման արդյունք էին: Դեռևս ընդլայնման առաջին փուլից ակնհայտ դարձավ, որ գործընթացի հիմնադիր պայմանագրերով սահմանված իրավական կարգավորման և փաստացի կարգավորման միջև առկա են շոշափելի տարբերություններ: Այդ տարբերությունների հիման վրա սկիզբ առավ ԵՄ անդամակցության գործընթացի սովորությանին կարգավորումը, որը, իր հերթին ևս անցնելով զարգացման որոշակի փուլեր, դարձավ ներկայումս գործող ընդլայնման քաղաքականության սահմանադրաիրավական հիմքի Լիսաբոնի պայմանագրի 49-րդ հոդվածի ատաղձը:

2. Հիմնադիր պայմանագրով սահմանված անդամակցության չափանիշները արտացոլված են Լիսաբոնի պայմանագրի 49-րդ հոդվածում, որի համաձայն՝ «Գանկացած եվրոպական պետություն, որը հարգում է 2-րդ հոդվածում նշված արժեքները և պարտավորվում է դրանք կյանքի կոչել, կարող է դիմել միությանը անդամակցելու համար»: 2-րդ հոդվածում նշված են այնպիսի արժեքներ, ինչպիսիք են՝ մարդկային արժանապատվությունը, ազատությունը, ժողովրդավարությունը, հավասարությունը, իրավունքի գերակայությունը և մարդու իրավունքների, ներառյալ փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների հարգումը: «Ցանկացած եվրոպական պետություն» ձևակերպումը, որը հիմնականում ունի աշխարհագրական նշանակություն, կիրառվում էր դեռևս ԵԱՊԸ մասին պայմանագրի 98-րդ հոդվածում և պայմանավորված է այն փաստով, որ ԵՄ-ն ցանկանում է պահպանել իր եվրոպական հնքությունը:

3. Լիսաբոնի պայմանագրի 2-րդ հոդվածում նշված արժեքներից հատկապես վերջին շրջանում առավել մեծ ուշադրություն է դարձվում ժողովրդավարությանը, իրավունքի գերակայությանը և մարդու իրավունքների պաշտպանությանը: ԵՄ անդամակցությունն ընդհանուր առմամբ հիմնված է ժողովրդավարական պայմանականության վրա, որն ապահովում է միայն սահմանադրական ժողովրդավարություն ունեցող պետությունների անդամակցությունը: Իրավունքի գերակայության չափանիշն առավել մեծ կարևորություն ստացավ հատկապես Բուլղարիայի և Ռումինիայի անդամակցության բանակցությունների ընթացքում առաջացած դժվարություններից հետո, որի արդյունքում այն ընդգրկվեց Խորվաթիայի հետ

նախաանդամակցային գործընթացի մեջ: Խորվաթիայի հետ բանակցություններում իրավունքի գերակայության վերաբերյալ *acquis*-ի արդարադատության և ներքին գործերի գլոխը բաժանվեց երկու առանձին գլուխների՝ դատական և հիմնարար իրավունքների ու արդարության, ազատության և անվտանգության: Այս միտումը շարունակվեց նաև հետագայում, երբ Մոնտենեգրոյի հետ անդամակցության բանակցությունների ընթացքում Հանձնաժողովը նշեց, որ իրավունքի գերակայության գլուխների վերաբերյալ առաջընթացը դանդաղելու դեպքում բանակցությունները կարող են կասեցվել: Դեռ ավելին, Մոնտենեգրոյի և Սերբիայի հետ անդամակցության բանակցությունները սկսվեցին հենց իրավունքի գերակայության վերաբերյալ գլուխներից: Պետք է նշել նաև, որ, բացի աշխարհագրական չափանիշից և Լիսաբոնի պայմանագրի 2-րդ հոդվածում թվարկված արժեքներից, Եվրոպական խորհուրդը հետագայում ավելացրել է նաև քաղաքական, տնտեսական, իրավական, վարչական և ինստիտուցիոնալ պայմաններ, որոնք ևս պետք է պարտադիր կերպով հաշվի առնվեն:

4. ԵՄ անդամակցության չափանիշները ձևավորվել և զարգացում են ապրել սկսած անդամակցության առաջին իսկ դիմումներից: 1993 թ. հունիսին Եվրոպական խորհրդի հանդիպումը Կոպենհագենում, բացի ԿԱԵ պետություններին անդամակցության խոստում տալուց, սահմանեց նաև, որ անդամակցությունը տեղի կունենա այն դեպքում, երբ ասոցացված անդամներն ի վիճակի կլինեն ստանձնելու անդամակցության պարտավորությունները՝ բավարարելով տնտեսական և քաղաքական անհրաժեշտ պայմանները: Ուշագրավն այն է, որ առաջին անգամ ԵՄ-ն անդամակցության խոստում տվեց այն պետություններին, որոնք դեռևս միությանը միանալու դիմում էլին ներկայացրել: Հետագայում նշված քաղաքական և տնտեսական պայմաններն ավելի մանրակրկիտ ներկայացվեցին և առավել հայտնի են «Կոպենհագենյան չափանիշներ» անվանումով: Ուսումնասիրելով Կոպենհագենյան չափանիշները՝ ակնհայտ է դառնում, որ դրանք համախմբում են նախկինում գոյություն ունեցող պրակտիկան և միևնույն ժամանակ ընդլայնում անդամակցության պայմանները: Կոպենհագենյան չափանիշները որոշակի փոփոխության են ենթարկում անդամակցության համար սահմանված պայմանները և ապահովում դրանց վերահսկման առավել համակարգված մեխանիզմներ: Հիմնական նորամուծությունը այն է, որ Կոպենհագենյան չափանիշներով սահմանված պարտավորությունները, հատկապես քաղաքական չափանիշները, առավել խստորեն են կիրառվում:

5. ԵՄ անդամակցության ընթացակարգերը ևս ենթարկվել են մի շարք փոփոխությունների: Նույնիսկ Լիսաբոնի պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո ԵՄ անդամակցության ընթացակարգերի կարգավորումը շարունակում է թերի մնալ: 2004-2007 թթ. ԿԱԵ պետությունների անդամակցության գործընթացը սկիզբ դրեց որոշ ընթացակարգային և վարչական նորամուծությունների, որոնք պայմանավորված էին այդ պետությունների քաղաքական, տնտեսական և ինստիտուցիոնալ առումներով զարգացման տարբեր մակարդակներով: Արդյունքում ի հայտ եկան այնպիսի նոր գործիքներ, ինչպիսիք են՝ Բանակցությունների շրջանակները, Առաջընթացի վերաբերյալ զեկույցները, Համապարփակ դիտարկման զեկույցները, Ընդլայնման ռազմավարության տարեկան փաստաթղթերը, Անդամակցության կոնֆերանսները և այլն:

Այդուհանդերձ, ԵՄ ընդլայնման ընթացակարգերում կենտրոնական դերը պատկանում է անդամակցության բանակցությունների փուլին, որը թեկնածու պետությունների կողմից ԵՄ ողջ օրենսդրությունը ընդունելու, իրականացնելու ու կիրառելու միջոցառումների ամբողջությունն է և կարող է տարբերվել երկրից երկիր:

6. Պայմանականության սկզբունքը՝ որպես ԵՄ ընդլայնման գործընթացի մեթոդիկական կարևորագույն բաղադրիչ, մշտապես եղել է անդամակցության կարևորագույն տարր: Պայմանականության սկզբունքի էությունը այն է, որ անդամակցության գործընթացի յուրաքանչյուր հաջորդ փուլին անցնելու համար անհրաժեշտ է բավարարել սահմանված որոշակի պահանջներ: Չնայած այս սկզբունքը մշտապես կիրառվել է ԵՄ ընդլայնման պատմության ընթացքում, այնուամենայնիվ այն ևս 2004-2007 թթ. ընդլայնումից և հատկապես Բուլղարիայի ու Ռումինիայի անդամակցությունից հետո ենթարկվել է էական փոփոխությունների: Ընդհանուր առմամբ կարելի է նշել, որ պայմանականության սկզբունքն ստացել է առավել տեխնիկական բնույթ և կիրառվում է անդամակցության առավել վաղ փուլերից սկսած: Արևմտյան Բալկանների երկրների նկատմամբ խորհրդի կողմից կիրառվող Կայունացման և աստղացման գործընթացի պայմանականությունը արդյունք է տարածաշրջանում տեղի ունեցած պատմական զարգացումների: Պայմանականության սկզբունքը շարունակվում է արդյունավետորեն կիրառվել նաև Սերբիայի և Մոնտենեգրոյի հետ հարաբերություններում, որի թերևս առավել հաջողված կետը 2013 թ. ապրիլի 19-ին Սերբիայի և Կոսովոյի իշխանությունների միջև կնքված պատմական համաձայնագիրն է, որն անվանվեց «Բրյուսելյան պայմանագիր» կամ «Վարաբերությունների կարգավորման դեկավար սկզբունքների վերաբերյալ առաջին պայմանագիր»: Կարծում ենք, որ ԵՄ-ն պետք է շարունակի խիստ պայմանականության գիծը, որի շնորհիվ կարելի է ակնկալել իրական բարեփոխումներ մինչև բանակցությունների հաջորդ փուլին անցնելը: Այս պարագայում պայմանականության սկզբունքը կարող է ծառայել որպես արդյունավետ գործիք միության, ինչպես նաև թեկնածու պետությունների համար:

7. Թեկնածու պետությունների՝ անդամակցության չափանիշների համապատասխանությունը գնահատելիս Եվրոպական հանձնաժողովին վերապահված է յուրաքանչյուր տարի թեկնածու պետությունների վերաբերյալ թողարկել Անդամակցության ճանապարհին իրականացվող առաջընթացի վերաբերյալ զեկույցներ և ներկայացնել դրանք ԵՄ խորհրդին: Կարելի է ասել, որ տարեկան զեկույցների տրամաբանությունը թեկնածու պետությունների կողմից մշտական ջանքերի գործադրումն է, որոնք ուղղված են Եվրոպական քաղաքական ստանդարտների համապատասխանեցմանը: Նման մոտեցումը նպատակ ունի ապահովելու հավասար վերաբերմունք թեկնածու բոլոր պետությունների համար, ինչպես նաև թեկնածու պետությունների կողմից անդամակցության ճանապարհին զրանցված առաջընթացի օբյեկտիվ գնահատում և համեմատում: Ընդհանուր առմամբ պետք է նշել, որ ԵՄ անդամակցության չափանիշների գնահատման թափանցիկությունն ու մրցակցային բնույթը ենթարկվում են որոշակի քննադատությունների, որոնք հատկապես ակտիվացան, երբ Բուլղարիան և Ռումինիան 2004 թ.-ին չվիացան

միությանը, և երբ հետագայում խորվաթիայի առաջընթացի գնահատման հետ կապված դժվարություններ առաջացան:

8. Ուշագրավ է այն հանգամանքը, որ Եվրոպական հանձնաժողովի գնահատականները հաճախ զգալիորեն տարբերվում են անկախ փորձաքննություն իրականացնող հեղինակավոր կազմակերպությունների՝ ԵԱՀԿ-ի, Համաշխարհային բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի, Freedom House-ի գնահատականներից: Մեր կողմից իրականացված համեմատական վերլուծությունները ցույց են տալիս, որ Բուլղարիայի դեպքում Հանձնաժողովի ներկայացրած արդյունքները գրեթե լիովին համապատասխանում էին անկախ գնահատողների տված եզրակացություններին, մինչդեռ Ռումինիայի և խորվաթիայի դեպքում Եվրոպական հանձնաժողովի գնահատականներն էականորեն տարբերվում էին չեզոք կազմակերպությունների որակումներից: Արդյունքում Ռումինիան, որն ամբողջովին չէր համապատասխանում անդամակցության չափանիշներին, 2007 թ.-ին անդամակցեց միությանը, իսկ խորվաթիան, որն առավել մեծ առաջընթաց էր գրանցել կոպենհագենյան չափանիշների համապատասխանության ոլորտում, ոչ: Փաստորեն առաջընթացի զեկույցները և պարբերական գնահատականները կարող են կիրառվել ոչ միայն պետություններն ընտրելու և գնահատելու անդամակցության ճանապարհին գրանցած առաջընթացը, այլ նաև հիմնավորելու այն քաղաքական վիճակը, որը հանգեցրեց Բուլղարիայի և Ռումինիայի անդամակցությանը և խորվաթիայի անդամակցությունը մերժելուն՝ չնայած կոպենհագենյան չափանիշների ոլորտում գրանցած փաստացի առաջընթացին:

9. Հայաստանի Հանրապետությունը անկախության ձեռքբերումից հետո իր արտաքին քաղաքականության գերակա ուղղություններից մեկը հռչակեց եվրոպական պետությունների և հատկապես դրանց ինտեգրացիոն միավորում հանդիսացող Եվրոպական միության հետ համագործակցությունը: Դա առավելապես պայմանավորված է միջազգային ասպարեզում Եվրոպական միության կողմից զբաղեցրած քաղաքական և տնտեսական դերակատարի ծանրակշիռ կարգավիճակով, ինչպես նաև ԵՄ անդամ պետությունների հետ ունեցած տնտեսական, քաղաքական, մշակութային կապերով: Ներկայումս ԵՄ-ՀՀ հարաբերությունների իրավական հիմքը շարունակում է մնալ Գործընկերության և համագործակցության պայմանագիրը, որը, սակայն, վերանայման կարիք ունի:

10. Թեև Հայաստանը Հանրապետությունը իր առջև երբևէ անդամակցության հեռանկար չի դրել, այդուհանդերձ Եվրոպական միության հետ ծավալվել է լայնածավալ համագործակցություն, որի շրջանակներում մեր հանրապետությունը նշանակալի քայլեր է ձեռնարկել տեղական օրենսդրությունը ԵՄ չափանիշներին համապատասխանեցնելու, ինչպես նաև մարդու իրավունքների միջազգային չափանիշները և նորմերը ազգային օրենսդրությունում ամրագրելու համար: Բարեփոխումներն իրականացվել են ամենատարբեր ոլորտներում, և այդ հանգամանքը բազմիցս դրական գնահատականի է արժանացել Եվրոպական հանձնաժողովի հրապարակած պարբերական զեկույցներում: Այս գործընթացը շարունակական բնույթ է կրում, և դրան չպետք է խոչընդոտի նաև Հայաստանի Հանրապետության անդամակցությունը Եվրասիական տնտեսական միությանը, քանի որ

Եվրոպական միության հետ արդյունավետ կապերի ամրապնդումը շարունակում է մնալ մեր պետության արտաքին քաղաքականության գերակա ուղղություններից մեկը:

11. Արևելյան գործընկերության ծրագիրը, որը ներկայացվեց որպես Եվրոպական հարևանության քաղաքականության արևելյան ձևաչափ, միանշանակ կարելի է դիտել ԵՄ անդամակցության չափանիշներին մերձեցնելու գործիք, չնայած այն ԵՄ անդամակցություն չի նախատեսում: Նախաձեռնությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ այլևս բարդացել էր ԵՀԶ հարավային և արևելյան հարևանների հետ հարաբերությունները զարգացնել մեկ միասնական հարթակի վրա: Արևելյան գործընկերությունը ձգտում է աջակցել քաղաքական և սոցիալ-տնտեսական բարեփոխումներին, որոնք գործընկեր երկրներին առավել կմոտեցնեն ԵՄ անդամակցության չափանիշներին, ինչպես նաև կխթանեն միությանը մոտենալու նրանց ջանքերը: Արևելյան գործընկերության շրջանակներում ԵՄ-ն շեշտը դնում է բարեփոխումների աջակցությանը գործընկեր պետությունների ամենատարբեր ոլորտներում, ինչպիսիք են՝ տնտեսությունը, հանրային կառավարումը, լավ վարչարարությունը, հասարակական սեկտորի զարգացումը, միջսահմանային համագործակցությունը, շրջակա միջավայրը և այլն, որոնք կնպաստեն այդ ոլորտներում տեղական ստանդարտների մոտեցմանը միության նորմերին: Այդ բարեփոխումները բնականաբար կարող են հետագայում առավել դյուրին դարձնել գործընկեր պետությունների անդամակցության բանակցությունները, չնայած դա, ինչպես արդեն նշվեց, չի ուրվագծվում որպես նպատակ:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Գրիգորյան Ս. Ա., Հայաստանի Հանրապետությունն Արևելյան գործընկերության շրջանակներում, «Հանրային կառավարում», Երևան 1-2, 2012 թ., էջեր 138-145:

2. Գրիգորյան Ս. Ա., ՀՀ համապատասխանությունը ԵՄ անդամակցության կոպենհագենյան քաղաքական չափանիշին, «Պետություն և իրավունք», Երևան, 2013 թ., թիվ 2-3 (60-61), էջեր 94-101:

3. Գրիգորյան Ս. Ա., Պայմանականության սկզբունքի էվոլյուցիան Եվրոպական միության ընդլայնման քաղաքականությունում, «Պետություն և իրավունք», Երևան, 2014 թ., թիվ 3-4 (65-66), էջեր 125-132:

4. Գրիգորյան Ս. Ա., ԵՄ անդամակցության չափանիշների գնահատումը Բուլղարիայի, Ռումինիայի, Լոռվաթիայի և Մակեդոնիայի օրինակներով, ԵՊՀ ՈւԳԸ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատ., 2015 թ., էջեր 460-471:

ГРИГОРЯН ТИГРАН АЛЕКСАНДРОВИЧ

ПРАВОВЫЕ ОСНОВАНИЯ И КРИТЕРИИ ЧЛЕНСТВА В ЕВРОПЕЙСКОМ СОЮЗЕ

РЕЗЮМЕ

В диссертационной работе исследуются правовые основания и критерии членства в Европейском Союзе. Автор детально анализирует Копенгагенские, а также определенные уставными договорами критерии вступления в ЕС. В работе рассматриваются проблемы в сфере сотрудничества Республики Армения и ЕС и соответствие РА критериям членства в ЕС в данном контексте. Представив исторические процессы, сыгравшие важнейшую роль в развитии права по расширению ЕС, автор приходит к выводу, что Копенгагенские критерии содержат уже сформированные в рамках ЕС и получившие традиционное применение в практике условия членства, которые могли быть применимы для всех стран и основой которым послужило обобщение критериев и стандартов, разрабатываемых с 1961г. в процессе расширения ЕС персонально для каждого государства.

Автор анализирует весь процесс вступления в ЕС, начиная с момента представления государством заявления в Совет о вступлении в Союз до ратификации соглашений о членстве. Обосновывая мнения о том, что статья 49 Договора о ЕС, даже после внесения изменений в Лиссабонский договор, продолжает оставаться несовершенным руководством по процессу вступления в ЕС, автор изучает новые правовые инструменты, возникшие в ходе восточного расширения 2004-2007 гг. Автор особо подчеркивает значение решения Европейского Совета от 2004 г., согласно которому, по предложению Комиссии, переговоры с каждым государством-кандидатом в члены ЕС отныне должны основываться на Рамочных переговорах, которые должны быть утверждены Советом.

Автор изучает принцип обусловленности как основной компонент методологии политики расширения ЕС. По мнению автора, после вступления Болгарии и Румынии возникли некоторые сомнения относительно эффективности этого принципа. В кругу представителей государств-членов ЕС распространена точка зрения, согласно которой Болгария и Румыния

преждевременно вступили в Союз, а принцип обусловленности по отношению к ним был применен недостаточно строго. Именно этим, по мнению автора, объясняется то, что принцип обусловленности в отношении стран Западных Балкан определенным образом отличается.

Изучив критерии, установленные для членства в ЕС, автор приходит к выводу, что практика последних лет по расширению ЕС показывает, что сегодня при вступлении в ЕС наибольшее внимание уделяется критериям демократии и верховенства права, которые закреплены как в Лиссабонском договоре, так и в Копенгагенских критериях. Значение принципа верховенства права как критерия членства в ЕС было подтверждено в ходе переговоров с Черногорией о членстве, когда Комиссия отметила, что в случае замедления прогресса по разделам о верховенстве права переговоры могут быть остановлены. Более того, переговоры по вступлению в ЕС Черногории, а также Сербии начались именно с разделов о верховенстве права.

Автором исследуется система оценивания критериев вступления в ЕС. Аналитическая оценка дана в основном по отчетам, периодически выпускаемым Комиссией относительно прогресса, отмеченного на пути вступления в ЕС Турции, Польши и Румынии. Анализ показывает, что Румыния, не вполне соответствуя критериям членства, вступила в Союз в 2007 г., а Хорватия, которая достигла наибольшего прогресса в области соответствия Копенгагенским критериям – не принята в него. Автор заключает, что периодические оценки и отчеты о прогрессе применяются не только для того, чтобы выбрать государства-кандидаты и оценить их прогресс на пути к вступлению в ЕС, но и для того, чтобы обосновать те политические реалии, которые способствовали членству Болгарии и Румынии и отказу в нем Хорватии, несмотря на ее фактический прогресс в достижении соответствия Копенгагенским критериям. Беспристрастность и прозрачность оценки ЕС и сегодня остаются актуальной проблемой.

Автором анализируются и проблемы в сфере сотрудничества РА-ЕС и, в данном контексте, соответствие РА Копенгагенским критериям и определенным уставными договорами критериям членства в ЕС. Проведя анализ Восточного Партнерства как инструмента приближения к критериям вступления в ЕС, автор констатирует, что в случае эффективного применения принципа обусловленности, в том числе и в рамках Восточного Партнерства и установления перспективы членства в ЕС, он может стать наиболее успешным.

TIGRAN ALEKSANDR GRIGORYAN
LEGAL BASIS AND CRITERIA FOR THE ACCESSION TO THE EUROPEAN
UNION

SUMMARY

The thesis is dedicated to the legal basis and criteria for the European Union accession. The author thoroughly analyzes Copenhagen Criteria, as well as the criteria defined by the founding treaties for the EU accession. The core problems in the field of the RA-EU cooperation and the RA suitability for the EU accession criteria in that context are also studied. Presenting the most important historical developments for the EU enlargement law, the author concludes, that Copenhagen Criteria include those accession terms that have already been formed within the EU and have customary usage in practice, based on the generalization of standards and criteria mechanisms worked out for individual countries in the process of the EU enlargement since 1961, that would be acceptable for all the countries.

The author also analyzes the whole EU accession process starting from the moment of presenting the accession application to the Council by the countries up to the ratification of the accession agreements. Considering that even after the changes in the Treaty of Lisbon, Article 49 of the Treaty on European Union remains not a perfect guide for the EU accession process, the author studies the new legal tools that appeared in the Eastern enlargement process in 2004-2007. The author especially highlights the importance of the European Council's decision in 2004, according to which hereinafter the accession negotiations with each candidate country would be based on the negotiation framework confirmed by the Council on the basis of the Commission's recommendation.

The author studies the principle of conditionality as the basic component of the EU's Enlargement policy. According to the author, some doubts arose about the efficiency of this principle after the accession of Bulgaria and Romania. There exists a common opinion among the representatives of the EU Member States, according to which Bulgaria and Romania joined the Union too early, and the principle of conditionality in their case was not strict enough. According to the author, that is the reason that the principle of conditionality towards the countries of the Western Balkans is somehow different.

Studying the defined criteria for the EU accession, the author finds, that the enlargement practice in the recent years shows, that today the dominance of democracy and the rule of law in the EU accession criteria, which are stipulated both in the Treaty of Lisbon and Copenhagen Criteria, are given more importance. The importance of the principle of the rule of law as an accession criteria was reaffirmed, when during the accession negotiations with Montenegro, the Commission noted, that the whole negotiation process could be suspended in case of procrastination in the progress of chapters about the rule of law. Moreover, the accession negotiations with Montenegro, as well as with Serbia started just from the chapters about the rule of law.

The author also analyzes the assessment of the EU accession criteria. The author mainly gives the analytical assessment of the periodically issued reports of the Commission about the progress of Turkey, Poland and Romania on their way to EU accession. The analyses show that Romania, that did not fully correspond to the accession criteria, joined the Union in 2007, while Croatia, that had achieved more progress in correspondence with Copenhagen Criteria, did not. The author concludes, that periodical assessments and reports about progress were used not only to select the candidate countries and to assess their progress in their way to accession, but also to substantiate the political reality, that supported the accession of Bulgaria and Romania and the refusal of Croatia's accession though its factual progress in the field of Copenhagen Criteria. Today the EU assessment impartiality and transparency is still a topical problem.

The author also analyzes the core problems in the field of the RA - EU cooperation and the RA suitability for the EU accession according to Copenhagen Criteria and the criteria defined by the founding treaties in that context. Analyzing the Eastern Partnership as a tool to get closer to the EU accession criteria, the author records, that it could have been more successful in case of efficient use of the conditionality and defining accession perspective within the scope of the Eastern Partnership, as well.